Հայտարարություն

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածնի թիվ 11 «Հասմիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մանկավարժական աշխատողի (հատուկ մանկավարժ) թափուր տեղի մրցույթի

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայքի Էջմիածնի թիվ 11 «Հասմիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հետևյալ մանկավարժական աշխատողի ընտրության համար.

1. Հատուկ մանկավարժ (1 դրույքաչափ):

Մրցույթին մասնակցելու համար ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 17 փետրվարի 2022 թ. թիվ 08-Ն հրամանի 12-րդ կետի պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 16-ը ներառյալ, բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 9^{00}-17^{00} ք. Էջմիածին, թիվ 11 «Հասմիկ» մանկապարտեզ (Պատկանյան 37/2) կամ Վաղարշապատի համայնքապետարան (սբ. Մեսրոպ Մաշտոց 0, Կրթության և մշակույթի բաժին):

Մրցույթին կարող է մասնակցել Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆառակավորման պահանջներին համապատասխանող անձը, ըստ որի անհրաժեշտ է՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ:

Հատուկ մանկավարժի թափուր հաստիքի մրցույթը տեղի կունենա հոկտեմբեր 20-ին, ժամը 14^{00} Վաղարշապատի համայնքապետարանի Կրթության և մշակույթի բաժնում:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ հաստատած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին՝ համաձայն ԿԳՄՄՆ հաստատած հարցաշարի:

Տեղեկությունների համար զանգահարել 0231-5-33-47 կամ 077 54 24 39 հեռախոսահամարներով: